



# ԱՆՆԱ ԲԱՔՈՒՇՅԱՆ

## Վերնագրեր ինքների

Երբեմն հույսը խորտակվում է, ու վերջակետից հետո ասելու ոչինչ չի մնում:

Թևաթափ վայր ենք դնում զենքերն ու հրաժարվում ենք պայքարից...

Անտարքերությունը մեկուսացնում է մեզ ու կտրում մեր տեսակից ...

Ասված ու չասված խոսքերն այլևս ի գործի չեն ոչինչ փոխել. չապրածը խառնվում է ապրվածին ու միապաղաղ օրերն հաջորդում են մեկը մյուսին:

Հին օրերի կարոտն ոսկորի նման կանգնում է մեր կոկորդին ու կուլ չի գնում, իսկ մեղքերը՝ սև բզեզ դարձած, անընդհատ հետևում են մեզ...

Բզեզն այլևս չկա, բայց բզզոցը խելագարության հասցնելու չափ փորում է մեր ուղեղներն ու վերակենդանացնում հիշողությանը...

Սուրճի մրուրի մեջ փորձում ենք փնտրել մեր կորած ոտնահետքերը, բայց դառն իրականությունը գալիս ու մխրճվում է աչքերիս մեջ:

Ամենուր համատարած սև է, բայց այնուամենայնիվ փորձում ենք փնտրել ու գտնել այն պատկերը, ինչը ցանկանում ենք տեսնել:

Փնտրում ենք մի սպիտակ կետ ու... կյանքը շարունակվում է :

Լավատեսությունը հույսին խորտակումից փրկող միակ պարանն է ...

Լավատես լինենք մարդի'կ...

25.02.2025

ԱԽՈՒՐՅԱՆ